**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 փետրվարի 2016 թվականի**

## Համալսարանի 2015 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքների և 2016 թվականի խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Համալսարանի 2015 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքները և 2016 թվականի խնդիրները»** հարցը (զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Ի.Վարդանյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2015 թ. գիտահետազոտական աշխատանքների ծավալն, ընդհանուր առմամբ, կատարված է:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանական գիտահետազոտական գործունեությունը կազմակերպվել և իրականացվել է համաձայն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012–2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգով» սահմանված խնդիրների ու նպատակների:

Ամբիոնների, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեության հետագա ակտիվացման նպատակով շարունակվել են ներքին գիտական դրամաշնորհների մրցույթները ինչպես համալսարանի, այնպես էլ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված հետազոտությունների պատվերների կատարման համար:

Համալսարանի գիտաուսումնական գործունեության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով շարունակվել են պրոֆեսորադասախոսական կազմից, ասպիրանտներից և ուսանողներից կազմված հետազոտական կոլեկտիվների ինստիտուցիոնալ աջակցության առաջադիմական ձև հանդիսացող գիտահետազոտական խմբերի գործունեությունը, որի շնորհիվ փորձ է կատարվում ուսանողներին, ասպիրանտներին ու երիտասարդ գիտնականներին ներգրավելու ֆինանսավորվող հետազոտական գործընթացում: Նախագիծը համահունչ է գիտության և կրթության միասնացման, ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական կրթության զարգացման պետական քաղաքականությանը: 2015 թ. գիտական խորհրդի որոշմամբ լրացում կատարվեց «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի վերաբերյալ կանոնակարգում», ըստ որի՝ 2016 թվականից կստեղծվեն նաև գիտաուսումնական լաբորատորիաներ:

2015 թ. շարունակվել է ամբիոնային 58 թեմաներով գիտահետազոտական աշխատանքների, 5 գիտաուսումնական խմբերի, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 5 գիտական ուղղություններով, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 4 դրամաշնորհային թեմաների կատարումը:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ աշխատանքներ են կատարվել 8 նախարարությունների (ֆինանսների, էկոնոմիկայի, կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական հարցերի, սփյուռքի, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, բնապահպանության, գյուղատնտեսության) հետ՝


ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝+37410 521720
Ֆաքս՝+37410 528864, էլ-փոստ՝info@asue.am, www.asue.am

նրանց հետազոտական կարիքները բացահայտելու և 2015 թվականի մրցութային թեմաների պատվերները ձևակերպելու նպատակով: Ֆինանսավորվող հետազոտություններում ընդգրկված է եղել շուրջ 150 հետազոտող, մոտ 50%-ը՝ ասպիրանտներ, մագիստրանտներ: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի խորհրդի հավանությամբ հայտարարվել է 2015 թվականի հետազոտական թեմաների մրցույթ: Հաստատվել են 5 հետազոտական թեմաներ՝ 20.331 մլն դրամ ներքին ընդհանուր ֆինանսավորմամբ: «Նորավանք» հիմնադրամի հետ կնքվել է համագործակցության պայմանագիր, իրականացվում են համատեղ հետազոտություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա հրատարակվել են՝ 2 դասագիրք, 24 ուսումնական ձեռնարկ, 35 մենագրություն, 3 դասախոսությունների նյութեր, 513 գիտական հոդված, 3 ուսումնամեթոդական աշխատանք, 1 էլեկտրոնային մենագրություն: Հոդվածներից 64-ը լույս են տեսել արտասահմանյան պարբերականներում:

2015 թ. հրապարակումների շուրջ 72%-ը բաժին է ընկել 6 ամբիոնի (միջազգային տնտեսական հարաբերություններ՝ 23.7%, տնտեսամաթեմատիկական մեթոդների՝ 16.9%, մակրոէկոնոմիկայի 10.2%, բանկային գործի և ապահովագրության՝ 6.8%, տնտեսագիտության տեսության՝ 6.8%, լեզուների՝ 6.8%):

Գիտաուսումնական խմբերի շրջանակներում կատարված աշխատանքի արդյունքները հրապարակվել են 7 հոդվածում, նախապատրաստվել է հրապարակման 1 մենագրություն, «Ցանցային տնտեսություն» գիտաուսումնական խմբի կողմից էլեկտրոնային տարբերակով հրապարակվել է «Ցանցային տնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում» աշխատանքը, որը նորույթ է համալսարանի հրատարակչական գործունեության մեջ և պետք է ունենա հետագա զարգացում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և կրթության ու գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աջակցությամբ 2015 թվականի նոյեմբերի 11-13-ը անցկացվել է համալսարանի 25-րդ գիտաժողովը «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» խորագրով: Առաջին լիագումար նիստին «Հայաստանի տնտեսության ինովացիոն զարգացման հիմնախնդիրները և հեռանկարները» զեկուցումով հանդես եկավ ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը, իսկ «Բարձրագույն կրթության և տնտեսական զարգացման փոխառնչությունները» զեկուցմամբ՝ համալսարանի ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր Կորյուն Աթոյանը: Երկրորդ լիագումար նիստին «Երկրի սահմանադրականության սոցիալական և տնտեսական կողմերը» զեկուցմամբ հանդես եկավ ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, «ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարները ԵԱՏՄ շրջանակներում» զեկուցմամբ՝ համալսարանի միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Միքայել Մելքումյանը, «Տնտեսական զարգացման հիմքերը. գիտելիք և նորաստեղծություններ» զեկուցմամբ՝ համալսարանի գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Վարդանյանը:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են նաև *կլոր սեղաններ*, քննարկումներ ու գիտական բանավեճեր՝ նվիրված կրթության որակի ապահովման, սոցիալ-տնտեսական զարգացման և հրատապ լուծում պահանջող այլ հիմնախնդիրների: «Ամբերդի» շրջանակում կատարվող հետազոտական թեմաների և մագիստրո-

սական հետազոտական ծրագրերի շրջանակներում անցկացվել է 12 սեմինար, ըստ ուսումնասիրության փուլերի քննարկվել են կատարված աշխատանքները:

Համալսարանի աշխատակիցները 2015 թվականին Մալայզիայում, Իտալիայում, Մալթայում, Շվեդիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, Բելառուսում մասնակցել են գիտաժողովների:

Միաժամանակ, գիտական խորհուրդն արձանագրում է՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնցից են.

- գիտական նորույթի արժևորման գործում արտաքին փորձագետների ներգրավմամբ ներքին դրամաշնորհների որակի գնահատման կարգի մշակումը.
- ըստ ամբիոնների՝ գիտական հրապարակումների անհամաչափ բաշխվածությունը.
- Scopus/Web of Science-ում հրապարակումների սակավությունը.
- պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակվող դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և դասախոսությունների սակավությունը.
- գիտաժողովներին, գիտական սեմինարներին և *կլոր սեղաններին* ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի որոշ անդամների ոչ գործուն մասնակցությունը.
- ասպիրանտուրայի և հատկապես դոկտորանտուրայի՝ երիտասարդ հետազոտողներով համալրման ոչ բարձր աստիճանը.
- հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրների ոչ մեծ թիվը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. **Համալսարանի 2015 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքները գնահատել բավարար:**

2. **Ի կատարումն ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլանի «Չափանիշ VI. Հետազոտություն և զարգացում» մասում պարունակող դրույթների, հանձնարարել՝**

1) **ամբիոններին, գիտության բաժնին** (հավաք), **«Ամբերդ» հետազոտական կենտրոնին** (ՉVI-Խ27, Խ28. *ՀՊՏՀ հետազոտական աշխատանքների հավելյալ երկարաժամկետ ռազմավարության մշակում՝ վերանայված առաքելությունից բխող գործունեության կոնկրետ ուղղությունների հստակեցմամբ* )՝
   - 2016 թ. առաջին կիսամսյակում կայանալիք գիտական խորհրդի նիստերից մեկում ներկայացնել տեղեկատվություն՝ հետազոտությունների ոլորտի կարիքների (նյութական, ֆինանսական, տեղեկատվական, վարչական, տարածքային, միջազգայնացման և այլն) և հետազոտության գերակա ոլորտների ցանկի առկայության վերաբերյալ (ներքին և արտաքին շահակիցների հետ քննարկումների արդյունքում՝ արձանագրություններ, առաջարկությունների թիվ).
   - գիտական խորհրդի 2016 թ. ապրիլի նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել ՀՊՏՀ հետազոտական գործունեության միջնաժամկետ (2016-2018 թթ.) ռազմավարությունը.


ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝ +37410 521720
Ֆաքս՝ +37410 528864, էլ-փոստ՝ info@asue.am, www.asue.am

- մշակել և գիտական խորհրդի 2016 թ. հունիսի նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել ՀՊՏՀ հետազոտական գործունեության երկարաժամկետ (2016-2021 թթ.) ռազմավարությունը.
- մշակել և գիտական խորհրդի 2016 թ. հունիսի նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել ՀՊՏՀ հետազոտական գործունեության միջնաժամկետ (2016-2018 թթ.) ռազմավարությունը և երկարաժամկետ (2016-2021 թթ.) ռազմավարությունների կատարման գնահատման չափանիշների ու չափորոշիչների կառուցակարգը.

2) **ամբիոններին, գիտության բաժնին** (հավաք), **«Ամբերդ» հետազոտական կենտրոնին, արտաքին կապերի բաժնին** (ՉVI-Խ29. *Հետազոտական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում՝ ներգրավելով արտաքին ֆինանսավորման և օժանդակության աղբյուրներ*)՝
- մշակել հասարակական նշանակություն ունեցող հետազոտական թեմաների ցանկ.
- վերլուծել ֆինանսավորման արտաքին աղբյուրները և արդյունքների հիման վրա մշակել հետազոտությունների ֆինանսավորման արտաքին աղբյուրների ցանկ, այն տեղադրել համալսարանի կայքում և մշտապես թարմացնել դրանում պարունակող տեղեկատվությունը.
- «Էրասմուս +» և «Հորիզոն 2020» ծրագրերի շրջանակներում հետազոտությունների ֆինանսավորման նպատակով արդյունավետ օգտագործել Վիզեգրադի հիմնադրամի աջակցությամբ ստեղծված համալսարանական կոնսորցիումում ՀՊՏՀ անդամակցությունը՝ ուժեղացնելով այդ ծրագրերին մասնակցության համար գործընկերների որոնման աշխատանքները.
- արտաքին ֆինանսավորման պայմանների վերաբերյալ տեղեկացվածության, տեղեկատվության տարածման կառուցակարգերի դիվերսիֆիկացման նպատակով՝ մինչև հունիս ամիսը, Վիզեգրադի հիմնադրամի աջակցությամբ ստեղծված միջհամալսարանական պորտալի ՀՊՏՀ վեբ-էջում տեղադրել համապատասխան տեղեկատվություն.
- 2017 թվականի առաջին եռամսյակի դրությամբ ապահովել հետազոտությունների ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (ներառյալ՝ միջազգային ծրագրերը և այլ աղբյուրները ՀՀ պետական և մասնավոր հատվածներից) միջոցների ստացումն ապահովող պայմանագրերի և հուշագրերի կնքում գործընկեր համալսարանների հետ.
- 2018 թվականի առաջին եռամսյակի դրությամբ ապահովել արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող առնվազն 10 ծրագրի իրականացում՝ դրանցով նախատեսվող ֆինանսավորման չափը հասցնելով ՀՊՏՀ գիտահետազոտական բնագավառի ֆինանսավորման ընդհանուր ծավալի 30%-ը.
- հետազոտությունների առևտրայնացման արդյունքում 2018 թվականի երրորդ եռամսյակում ապահովել ՀՊՏՀ եկամտի 10%-ը:

3) **ամբիոններին, գիտության բաժնին** (հավաք), **«Ամբերդ» հետազոտական կենտրոնին** (ՉVI-Խ30. *Ապահովել գիտության միջազգայնացման ֆինանսավորում*)՝

- հաստատել կապեր համապատասխան ոլորտային կազմակերպությունների հետ (համատեղ ծրագրեր, հետազոտողների փոխանակում, մասնակցություն միջազգային գիտաժողովներին և այլն).
- վերլուծել գիտական հետազոտությունների ֆինանսավորումը.
- մշակել և 2016 թվականի երրորդ եռամսյակում գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել միջազգայնացման ֆինանսավորման պլանը:

**4) ամբիոններին, գիտության բաժնին** (հավաք), **«Ամբերդ» հետազոտական կենտրոնին** (ՉVI-Խ31. *Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներառում մագիստրոսական կրթական ծրագրերում)՝*
- ուսումնական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ավելացում.
- հետազոտության արդյունքների ներառում դասավանդման գործընթացներում.
- դասընթացների փոփոխությունների արտացոլում ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում:

**3. 2016 թ. առաջնահերթ խնդիրներ համարել՝**

**1)** գիտաուսումնական լաբորատորիաների ձևավորման ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը և գիտաուսումնական խմբերի գործունեության արդյունավետության բարձրացումը.

**2)** ներքին և արտաքին դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ընդլայնումը.

**3)** գիտահետազոտական գործունեության և ուսումնակրթական գործընթացների կապի հետագա խորացումը՝ դասավանդվող նյութի կիրառական ուղղվածության և ուսանողների հետազոտական հմտությունների զարգացման նպատակով.

**4)** հայաստանյան և միջազգային համաժողովներին ու գիտական նստաշրջաններին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների մասնակցության ընդլայնումը.

**5)** «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի խմբագրական խորհրդում արտասահմանյան առաջատար գիտնականների ներգրավումը.

**6)** Վեբ օֆ սայնսի (Web of Science), Գուգլ սքոլարի (Google Scholar) և Սկոպուսի (Scopus) տվյալների բազայում ներառված հրատարակություններում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ծավալի մեծացումը:

**4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյանին:**

**Գիտական խորհրդի նախագահ** **Կ. Լ. Աթոյան**

**05.02.2016 թ.**